# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ

<<17>> Մայիսի 2019թ. N ՄՈ/132-2019

ք. Արմավիր

**<<ԵՐՎԱՆԴԱՇԱՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԼՈՒՍԻՆԵ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետով, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով, հիմք ընդունելով <<Երվանդաշատի առողջության կենտրոն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից 2019 թվականի ապրիլի 16-ին տրամադրված AF N 007106 անաշխատունակության թերթիկը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի 2019 թվականի ապրիլի 16-ի զեկուցագիրը և <<Երվանդաշատի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության մաթեմատիկայի ուսուցչուհի Լուսինե Գասպարյանի համաձայնությունը.

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. <<Երվանդաշատի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը վերապահել նույն դպրոցի մաթեմատիկայի ուսուցչուհի Լուսինե Գասպարյանին՝ մինչև ժամանակավորապես բացակայող աշխատողի վերադարձը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՄԱՐԶՊԵՏ** **Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

invalid signature

VERIFIED OCSP 4/17/2019 15:54:29 GMT+4

Signed by: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230